

ՀՐԱԲՈՒՆԵՐ, երկրաբանական առաջա-
ցումներ երկրակեղևի ճեղքվածքների և
կանալների վրա, որոնցով մշտապես կամ
պարբերաբար խորքային մագմատիկ
օջախներից երկրի մակերևույթ են ժայթ-
քում լավաներ, տաք գազեր, գոլորշիներ և
ապարների բեկորներ: Սովորաբար Հ.
առանձին լեռներ են՝ կազմված ժայթքման
արգասիքներից: Ըստ մատուցման կա-
նալների ձևի Հ. լինում են՝ ճեղքվածքա-
յին և կենտրոնական: Ճեղքվածքային Հ.
գոյացնում են վիթխարի զառիկող լավա-
յին ծածկոցներ մինչև 3000 չ ընդհանուր
հաստությամբ (օրինակ, Սիբիրական վա-
հանի, Դեկանի սարահարթի բազալտային
ծածկոցները): Կենտրոնական Հ. կոնաձև
բարձունքներ կամ հսկայական բարձրու-
թյան հասնող լեռներ են, ունեն խողովա-
կանման մատուցող կանալներ, որոնք
վերին մասում վերջանում են խառնարան-
ներով կամ փողաբերաններով: Մշտական
կամ պարբերական ակտիվություն ցուցա-
բերող Հ. կոչվում են գ ո ռ ծ ո ղ Հ. կամ
հրաշունչ սարեր: Այն Հ., որոնք պատմա-
կան ժամանակներում չեն գործել, բայց
պահպանել են իրենց ձևը և կառուցվածքը,
համարվում են ք ն ա ծ Հ.: ՀՄՄՀ տարած-
քում հայտնի են ավելի քան 500 քնած հրա-

բուխ: Խոր փոփոխություններ կրած՝ քայ-
քայված և հարթված Հ. դասվում են հան-
գած Հ-ի շարքին: Դրանց թվին են պատկա-
նում հեռավոր երկրաբանական ժամանա-
կաշրջաններում գործած Հ. (օրինակ, Արի-
սի մարզի, Հունգարիայի, Ֆրանսիայի
Հ.): Տարբերում են Հ-ի ժայթքման հետև-
յալ տիպերը: Հ ա վ ա յ ա ն տ ի պ. լա-
վան շատ հեղուկ է՝ բազալտային, գազե-
րով աղքատ է, դուրս է հոսում հանգիստ,
առանց պայթյունների և խառնարանում
առաջացնում լավային լիճ, գազերի հա-
մեմատաբար բուռն անջատումների դեպ-
քում լավան շատրվանում է (օրինակ, Հա-
վայան կղզիների Հ.): Ս տ ր ո ս ք ո լ -
յ ա ն տ ի պ. լավան որոշ չափով մածու-
ցիկ է, բայց դեռ բավական հոսուն է,
երբեմն առաջացնում է երկար հոսքեր,
այն հարուստ է գազերով, որոնք անջատ-
վում են պայթյուններով և դուրս շարտում
շիկացած լավայի տակավին պլաստիկ
գղձիկներ. դրանք թռիչքի ընթացքում ձևա-
փոխվում են խարամի, իլիկաձև ու ոլոր-
ված ռուսբերի, պայթյունները հաճախակի
են և կրկնվում են հավասար ընդմիջում-
ներով (օրինակ, Ստրոսբուրի՝ Լիպարյան

կղզիներում, Տուրաշիկը՝ Կամչատկա-
յում): Վ ու լ կ ա ն յ ա ն տ ի պ. լա-
վան մածուցիկ է, հարուստ գազերով,
որոնք դժվարությամբ են ձեղքում-անց-
նում նրա միջով և առաջացնում ուժեղ
պայթյուններ՝ սառած լավայի բեկորնե-
րի, ավազի և մոխրի արտանետվածքնե-
րով, լավային հոսքերը սակավ են և կարճ
(օրինակ, Վուլկանոն՝ Լիպարյան կղզի-
ներում, Ավաշինյան և Կարիսյան սոակա-
ները՝ Կամչատկայում): Պ ե լ ե յ ա ն
տ ի պ. լավան խիստ մածուցիկ է, սառչում
է մինչև հրաբխափոռից դուրս գալը և խցա-
նում այն, գազերի աճող ճնշման շնորհիվ
խցանը աստիճանաբար դեպի վեր է շարժ-
վում՝ նմանվելով բարձրադիր կոթողի,
խառնարանից դուրս նետվող գազերը,
մոխրի հետ միասին, շիկացած ամպերի
ձևով սահում են լանջերով ցած (օրինակ,
Մոնտան-Պելեն՝ Մարտինիկա կղզում):
Կ ա տ մ ա յ ա ն տ ի պ. լավան ժայթ-
քումից առաջ փրփրում է, ցնցղնվում և
մոխրի շիկացած հոսքի տեսքով արտա-
վիժում խառնարանից (օրինակ, Կատմա-
յը՝ Ալյասկայում): Բ ա ն դ ա յ ա ն տ ի պ.
տ ի պ. բնորոշվում է հսկայական ուժի
պայթյուններով, որոնց հետևանքով առա-
ջանում են զանազան ապարների տարբեր

չափերի բեկորներ, լավային արտավիժումներ չեն նկատվում (օրինակ, Բանդայը՝ Ճապոնիայում): Պ ի ն ե յ ա ն տ ի պ. հզոր և սի քանի *կՄ* բարձրությամբ գազային սյունը մոխրի հետ շատրվանում է դեպի վեր՝ ստեղծելով վիթխարի սունկի տպավորություն (օրինակ, Վեգուվը՝ Իտալիայում): Հայտնի են նաև ստորջրյա ժայթքումներ, որոնք երբեմն առաջացնում են հրաբխային կղզիներ: Հ-ի ձևերը կախված են ժայթքող լավայի բաղադրությունից և մածուցիկությունից, լավայի, բեկորային նյութի, մոխրի ու գազերի քանակական հարաբերություններից և այլ գործոններից: Առավել տարածված են կոնաձև, գմբեթաձև, վահանաձև և զանգվածային Հ.: Ժամանակակից Հ. տեղադրված են երիտասարդ լեռնաշղթաների, խոր բեկվածքների (գրաբեկների), հարյուրավոր և հազարավոր *կՄ* ձգվող տեկտոնական ակտիվ զոնաների երկարությամբ: Գործող Հ-ի մոտ 2/3-ը կենտրոնացած է Խաղաղ օվկիանոսի կղզիներում և ասիերում (Խաղաղօվկիանոսյան հրաբխային գոտի): Մյուս կարևոր մարզը Ատլանտյան օվկիանոսի շրջանն է: Ներկայումս Երկրի վրա հայտնի են շուրջ 650 գործող հրաբուխ մայր ցամաքներում

և շատ ավելի՝ օվկիանոսների ու ծովերի
հատակում: Հի աշխարհագրական տե-
ղաբաշխումը խոսում է նրանց սերտ կապի
մասին երկրակեղևի շարժուն և ծալքա-
վորված զոնաների հետ: Այդ զոնաներում
առաջացած ճեղքվածքները հենց այն ուղի-
ներն են, որոնցով մագման բարձրանում
է երկրի մակերևույթ: